

ԳԱՅԱՆԵ ԽԱԼԱԹՅԱՆ

ԵԼԵՆԱ ԹՈՒՄՈՅԱՆ

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԼՈՌԵՑԻ ՍԱՔՈՆ» ՊՈԵՄԻ
ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i64.85

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացնում ենք Հովհաննես Թումանյանի «Լոռեցի Սաքոն» պոեմի բառապաշարի տարբեր շերտերի քննություն՝ բարբառային, ժողովրդախոսակցական բառեր, բարբառներին անցած փոխառություններ, հարադրավոր բարդություններ, բառակրկնություններ, ձայնարկություններ, որոնց կիրառությամբ հեղինակը պատկերավոր է դարձնում Լոռվա միջավայրի նկարագրությունը, հովիվ Սաքոյի կերպարի բնորոշ գծերի բացահայտումը:

Բանալի բառեր և արտահայտություններ. բարբառային բառեր, փոխառյալ բառեր, բարդություններ, գրողի ոճ, բառակրկնություններ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հ. Թումանյանի պոեմի բառապաշարը բազմաշերտ է: Ստեղծագործության մեջ հաճախված են Լոռվա բարբառին բնորոշ բառամիավորները, որոնց միջոցով հեղինակը ներկայացնում է գործողությունների կատարման միջավայրը, հերոսի՝ Սաքոյի կերպարի առանձնահատկությունները: Մեր նպատակն է կատարել «Լոռեցի Սաքոն» պոեմի բառապաշարի տարբեր շերտերի քննություն:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքը իրականացնելիս օգտվել ենք առավել գործածական հետազոտական, բառակազմական վերլուծությունների, համեմատական, ոճաբանական, մասնավոր-որոնողական, ստուգման մեթոդներից:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հ. Հարությունյանը գրում է, որ Թումանյանի հերոսները ունեն իրենց մտածելակերպով, միջավայրով, հոգեվիճակով, մտավոր ունակություններով, երկիրովանդակությամբ պայմանավորված արտահայտչաձևեր: Նրանցից յուրաքանչյուրի լեզուն ունի յուրահատուկ բառապաշար, շարահյուսական կառուցվածք և հնչերանգ (**Հարությունյան Հ., 1979**):

«Լոռեցի Սաքոն» պոեմի համանուն հերոսը բոլորովին չի խոսում, սակայն հեղինակային խոսքից նրա բնավորության որոշ գծեր և արտաքին նկարագրությունն արդեն պարզ են՝ աժդահա, ինքնավստահ, անվախ:

Պոեմի լեզվի կենդանի ու արտահայտիչ լինելը բխում է ստեղծագործության ժողովրդայնությունից, որը պայմանավորված է պոեմում հեղինակի խոսքում տարբեր խոսքային միջավայրերում ժողովրդախոսակցական և բարբառային բառերի հաճախակի կիրառություններով: Կերպարի անհատականացման համար Հովհաննես Թումանյանը Սաքոյին բնորոշող հատվածները ձևավորել է Լոռվա բարբառով՝ կերպարն առավել համոզիչ դարձնելու, նրա լեզվամտածողությունը և սեփական աշխարհընկալումը բացահայտելու, նրան տիպականացնելու այլևայլ միտումներով:

Ստեղծագործության մեջ մեծ թիվ են կազմում բարբառային դարձվածքները ու ժողովրդախոսակցական բառերը, բարբառներին անցած փոխառությունները, բառակրկնությունները, ձայնարկությունները, ինչպես նաև հատկանուններ, որոնցով պայմանավորված է հեղինակի և կերպարի ժողովրդական մտածողությունը, լեզվի պատկերավորությունը, միջավայրի բնեղանակի ստեղծումը:

Լ. Եզեկյանը գրում է, որ այսօրվա մեր գեղարվեստական գրականության, մասնավորապես արձակի լեզուն հիմնականում սնվում, հարստանում և համապատասխան ոճավորում է ստանում բարբառների, ժողովրդական լեզվի միջոցներով, որի բառապաշարն ավելի գործուն է, հյութեղ, կենդանի և կենսունակ, որը և միշտ ու անընդհատ փոփոխության է ենթարկվում (**Եզեկյան Լ., 1990**):

Խելագար թրոչում քարերի զրլիտով,

Փըրփուր է թըքում անգուսպ երախով,

Թըքում ու զարկում *ժեռուտ* ափերին,

Փրնտրում է ծաղկած ափերը հին-հին¹:

Ըստ լեզվի ինստիտուտի «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ի՝ **ժեռուտ** բառը Արարատյան (Լոռվա) բարբառին բնորոշ բառ է, որ նշանակում է **ժայռուտ (Հայոց լեզվի բարբառային բառարան, 2001)**:

Բարբառային և ժողովրդախոսակցական բառերով է հագեցած հենց հեղինակի խոսքը: Նկատենք, որ Թումանյանի ստեղծագործություններում հեղինակի խոսքը առավելագույնս մոտեցված է հայ գյուղացու կենդանի խոսքին: Հեղինակային խոսքի բառային քննությունը վկայում է հեղինակի ձգտումը դեպի ժողովրդի լեզվի բառապաշարը:

Պոեմում տեղ է գտել **շրնալիք** բառը:

Ով գիտի՝ պարկում **շրնալի՞ք** չըկար,

Ա՞ղ էր հարկավոր ոչխարի համար:

Էդուարդ Աղայանը նշում է՝ **շրնալիք** (շնալեր) բառը ժողովրդախոսակցական բառ է ու նշանակում է **շան այլուր**, որ շաղախում ու թխում են շների համար (**Աղայան Է., 1976**):

Քանի որ Սաքոն հովիվ էր, Թումանյանը ավելի պատկերավոր է դարձնում նրա գործունեության միջավայրը:

Աժդահա Սաքոն ընչի՞ց է վախում:

Հապա մի նայի՛ր հրսկա հասակին,

Ո՛նց է **մեկնըվել**: Ասես ահագին

Կաղնըքի լինի անտառում ընկած:

Այս հատվածում Թումանյանը Սաքոյի հասակը համեմատում է **կաղնըքի՝ կաղնիների ծառերի** հետ: Օրինակները վկայում են, որ հեղինակը հաճախ է գործածում նեղ բարբառային բառեր՝ հիմնականում Լոռվա տարածքին բնորոշ:

Աստծու գիշերը գալիս են հանդեն,

Փետ են հավաքում, վառում են օդեն,

¹ Հոդվածում հանդիպող բոլոր բնագրային օրինակները վերցված են Հ. Թումանյանի «Լոռեցի Սաքոն» պոեմից (**Թումանյան Հ., 1978**):

Շրհուն ու *պրկուն* խառնում են իրար,

Ածում են, խաղում, խընդում միալար:

Նշված խոսքաշղթայում վառ կերպով է այտահայտված Սաքոյի հովիվ ընկերների առօրյան, ու երաժշտական գործիքներից **շվիի** ու **սրինգի** բարբառային տարբերակների գործածումը ստեղծում է ժամանակի ու միջավայրի բներանգ:

Ըստ Է. Աղայանի՝ **շհու** բարբառային բառի համարժեքը շվին է, որը փոքրիկ եղեգնյա սրինգն է (**Աղայան Է, 1976**): Ս. Մալխասյանցը նշում է՝ **պկու** բառը եղեգնից կամ այլ բույսի ցողուններից շինված շվին ու սրինգն է (**Մալխասյանց Ս., 1944**):

Ածել բայը բազմիմաստ բառ է. չորրորդ իմաստով նշանակում է **նվազել** (**Հայոց լեզվի բարբառային բառարան, 2001**): Այս իմաստով է թումանյանը նշված բայը գործածել պոեմում:

Ստեղծագործության մեջ հաճախ ենք տեսնում Լոռվա բարբառ ներթափանցած մի քանի փոխառություններ, որոնց հեղինակը դիմել է՝ միտում ունենալով հարազատ մնալու ժողովրդական մտածողությանը, նրա ոգուն:

Հովիվ է Սաքոն, ունի մի ընկեր.

Սատանի նըման նա էլ էս գիշեր

Գընացել է տուն: Սարերի **չոբա՛ն**:

Չոբան բառը, ինչպես նշում է Ստեփանոս Մալխասյանցը, փոխառվել է պարսկերեն **čoban** բառից, որ նշանակում է **հովիվ**: Հարկ է նշել, որ խոսքին ոճականություն և պատկերավորություն հաղորդելու համար հեղինակը միևնույն խոսքաշարում գործածել է բնիկ հայերենի ու փոխառյալ բառի հոմանիշները՝ հովիվ-չոբան:

Մեկ այլ հատված վկայենք:

Մենակ է Սաքոն ու չունի ընկեր:

Բուխարու կողքին լուռ թինկը տըված

Մըտածում է նա...

Բուխարի բառը արաբերեն buxar (գոլորշի), տաճկերեն buxār (վառարան) բառերից է փոխառվել է և մինչ այսօր էլ գործածական է որոշ բարբառներում (**Հայոց լեզվի բարբառային բառարան, 2001**):

Փոխառություն է նաև **ազիզ** բառը:

Ես քու հոքիրն... ես քու նանն եմ...

Ես էլ **ազիզ** բարեկամ... :

Ըստ Ստեփանոս Մալխասյանցի՝ **ազիզ** բառը տաճկերեն āziz բառից է փոխառված, որն ունի երկու իմաստ՝ 1. սիրելի, թանկագին, 2. տոնական, նվիրական (**Մալխասյանց Ս., 1944**):

Հեղինակի համար բարբառային բառերին դիմելը ոճական միջոց է, հնարք՝ իր հերոսին տիպականացնելու, Լոռվա միջավայրը վեր հանելու համար:

Սրընթաց **պախրա՞**, թե՞ գայլ գիշատիչ

Շեշտակի անցավ **փարախի** մոտով:

Պախրա նշանակում է **այծյամ, կխտար** (**Կռանյան Ա., 1998**), **փարախ**՝ ոչխարները հավաքելու տեղ, **գոմ** (**Կռանյան Ա., 1998**):

Պոեմում հեղինակը, բացի բնության նկարագրությունից ու Սաքոյի հոգեկան աշխարհի բացահայտումից, ցույց է տալիս՝ որտեղ են կատարվում գործողությունները:

Ես **տախտի** վրա աղոթում մի վանք,

Էն ժայռի գրլխին հրսկում է մի բերդ:

Այս հատվածում էլ հանդիպում է **տախտ** բառամիավորը, որը բազմիմաստ բառ է ու նշանակում է՝ 1. տախտակից շինած քառանկյունի լայն նստարանաձև հարմարանք, որի վրա գցում են ներքնակ, ծածկում են գորգով, վրան դնում մութաքաներ, գործածվում է նստելու տակապատ հատակով, 2. գահույք, բազմոց, 3. (բրբ.) սենյակի հատակ, 4. (բրբ.) տափարակ տեղ լեռան վրա կամ ձորում, 5. մարգագետին, 6. հրացանի կոթի տափակ մասը, 7. (բրբ.) երկու մետրից ավելի երկարությամբ և մոտ 15 սմ տրամագծով գերան, որ պառկեցնում են ջրաղացի ջրտանը և վրան գետեղում պնտղկան:

Վերոնշյալ հատվածում **տախտ** բառը Թումանյանը գործածել է չորրորդ իմաստով, այսինքն՝ նկատի է ունեցել լեռան կամ ձորի վրայի տափարակ տեղ:

Հետաքրքրություն է ներկայացնում Դեբեդ հասկանվան կիրառությունը հեղինակի կողմից. «Գալարվում է գիժ **Դե-Բեդդ** մոլի», իսկ արդեն վերջում ասում է. «Այնինչ **Դեբեդից** ալքեր են թռչում»: Պեմում Դեբեդ հատուկ անունը գործածված է մի դեպքում իբրև անվանական վերլուծական բարդություն, մի այլ կիրառության մեջ՝ իբրև կցական բարդություն՝ հնչյունական որոշակի փոփոխությամբ: Դեբեդը Թումանյանի կողմից անձնավորվում է: Հեղինակը Դեբեդին ներկայացնում է զայրացած ու դժգոհ:

Պեմում տեղ է գտել նաև **Ձորագետ** հասկանունը (գետ), որը պոեմում դարձյալ անձնավորված է՝ խոսքային միջավայրին ոճական լիցքեր հաղորդելու նպատակով:

Ձորագետն է միայն մըրափած վըշշում:

Սաքոյին շրջապատող բնությունը, իրերն ու առարկաներն ավելի խորհրդավոր ու սհարկու ձևով ներկայացնելու ձգտումն արտահայտվել է նաև առանձին բառերի, այդ առարկաները բնորոշող համապատասխան որոշիչների ընտրության հարցում (**Մելքոնյան Ս., 1969**):

Մութ անձավներից, հազար ձևերով,
 Քաջքերն անհանգիստ՝ **հըտայիտ** ձայներով
 Դևի հառաչքին արձագանք տալի,
 Ծաղրում են նըրա գոռոցն **սհռելի**:
 Աչքերը հանգչող կըրակին հառած՝
 Ծանրը է շընչում հովիվն սհ առած,
 Ու **վայրի** հոգին լեռնական մարդու
 Ալեկոծում է կասկածն **սհարկու**:

Ստեղծագործության մեջ տեսնում ենք հարադրավոր բայերի՝ Լոռվա բարբառին հատուկ կիրառության դեպքեր, այն է՝ **թինկը տվել**, որ նշանակում է **կորթնել, հենվել** (Հայոց լեզվի բարբառային բառարան, 2001):

Ոճականորեն արդարացված է նաև **թինկը տալ** հարադրավոր բայի կիրառությունը: Այս առնչությամբ նշենք, որ Լ. Եզեկյանը գրում է՝ բայական հարադրությունները ամենից առաջ ժողովրդախոսակցական լեզվում տարածված արտահայտություններ են՝ բնորոշ հայ մարդու լեզվամտածողությանը (**Եզեկյան Լ., 1990**):

Պոեմում Թումանյանը գործածել է հարադրավոր բայերի ժողովրդական այլ տարբերակներ:

Ո՞վ ես, էհե՛յ...ի՞նչ ես անում.

Ի՞նչ ես լրռել, **ձեն չես հանում** :

Կանգնեց ու լռեց...

Ականջ դրրավ նա...

Նայիր էսպե՛ս,

Մըտիկ արա՛ :

Նկատենք, որ հարադրավոր բայի ժողովրդական տարբերակի արտահայտած իմաստային նրբերանգները, պատկերավորությունը հնարավոր չէ ցույց տալ գրական համարժեքով:

Հաճախված ենք տեսնում նաև կրկնավոր վերլուծական բարդություններ:

«Կրկնավոր բարդությունները նույն բառի կրկնությամբ հարադրական կամ համադրական բարդություններն են: Հանդիպում են ինչպես անհնչյունափոխ, այնպես էլ հնչյունափոխված բաղադրիչներով կրկնավորներ: Երբեմն առաջին բաղադրիչը հանդես է գալիս արտակարգ փոփոխությամբ» (**Խալաթյան Գ., Ջուլֆայան Ռ., 2018**):

Պոեմի բառապաշարում հանդիպում ենք բազմաթիվ կրկնավոր բարդությունների, որոնց գործածությունը Թումանյանի նախասիրած ոճական հնարներից է: Բառակրկնությունները սովորաբար գեղարվեստական խոսքը օժտում են հուզականությամբ: Հեղինակը գործածում է կենդանի ժողովրդախոսակցական լեզվում արդեն գոյություն ունեցող բառակրկնություններ:

Փընտրում է ծաղկած ափերը **հին-հին**,

Ու գոռում **զիժ-զիժ** :

Գուլպան բուխարու վրա կախ արել

Ու թինկը տըվել,

Մեն-մենակ թըրթվել:

Մութ աշտարակից, ինչպես զարհուրանք

Բուի կըռինչն է տարածվում **մերթ-մերթ** :

Ու գոռում գիծ-գիծ, -Վա՛ 2-վի՛ 22, վա՛ 2-վի՛՛ 22

Ու կըրկնում գիծ-գիծ,

-Վա՛ 2-վի՛ 22, վա՛ 2-վի՛՛ 22...:

Իմաստի սաստկացման միտումով Թումանյանը կիրառել է հոմանշային գույգերից կազմված անվանական վերլուծական բարդություններ և յուրաքանչյուր հաջորդ կիրառության ժամանակ փոխելով երկրորդ բաղադրիչը՝ ստացել է բարդությունների նոր կաղապարներ:

Մինչև որ մենակ մի մարդ կըզըտնեն,

Ճիչով-քրքրիջով... փարախը մըտնեն...

Տունը լըցվավ թուրք կանանցով,

Ճիչ-գոռոցով, հըռհըռոցով...

Հերարձակ խըմբով, **Ճիչ-աղաղակով**

Հասնում են մեջքին, բըռնում են թևից :

Պոեմի բառապաշարի ժողովրդայնությունը խորացնում են նաև Լոռվա բարբառին բնորոշ, ժողովրդի կենդանի խոսքում գործածվող բայաձևերի խոնարհման կիրառությունները:

Նըրանց ոտքերում գազազած **գալի**,

Գալարվում է գիծ Դև-Բեդը մոլի:

Քաջքերն անհանգիստ հըտպիտ ձայներով

Դևի հառաչքին արձագանք **տալի**...

Աժդահա Սաքոն ընչի՞ց է **վախում**:

Միտն եկան, ու մեր Սաքոն ակամա

Մկսավ մըտածել չարքերի վրա:

Կանգնեց ու լըռեց...

Ականջ *դռրավ* նա...

«Լոռեցի Սաքոն» պոեմում իրենց ուրույն տեղն ունեն նաև *ձայնարկությունները*, որոնք ժողովրդական մտածողության արգասիք են:

Ու գոռում գիժ-գիժ, -Վա՛ 2-վի՛ 22, վա՛ 2-վի՛ 22

Ու կըրկնում գիժ-գիժ, -Վա՛ 2-վի՛ 22, վա՛ 2-վի՛ 22...

Մեկ այլ օրինակներում տեսնում ենք.

Վախեցնում է. **հա՛, հա՛, հա՛, հա՛:**

Հա՛, հա՛, հա՛, հա՛...

Տե՛ս-տե՛ս, տե՛ս-տե՛ս.

Նայիր էսպե՛ս,

Մըտիկ արա՛,

Հա՛, հա՛, հա՛, հա՛

Ո՞վ էս, էհե՛յ...ի՞նչ էս անում.

Ի՞նչ էս լըռել, ձեն չէս հանում...

Ձայնարկությունների ընտրությունը հեղինակի կողմից բոլորովին էլ ինքնանպատակ չէ: Դրանով հեղինակը նոր գույներ է հաղորդում խելագարված Սաքոյի կերպարին, ահագորս բնությանը և վշագող գետին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պոեմի բառապաշարը քննելիս նկատելի է, որ հեղինակը հաճախ է գործածել Լոռվա տարածքին բնորոշ բարբառային բառեր:
2. Գործածված բառերից որոշները փոխառություններ են այլ լեզուներից, ինչպիսիք են պարսկերերենը, արաբերենը և տաճկերենը:
3. Բնության նկարագրությունները ավելի արտահայտիչ դարձնելու և խոսքին ոճականություն հաղորդելու նպատակով պոեմում կիրառված հատկանունները անձնավորված են:
4. Ստեղծագործության մեջ առկա են Լոռվա բարբառին հատուկ հարադրավոր բառերի կիրառություններ, որոնց արտահայտած իմաստային նրբերանգները հնարավոր չէ արտահայտել գրական համարժեքով:

5. Պոեմում հաճախած են կրկնավոր բարդությունները: Հեղինակը գործածել է Լոռվա բարբառում արդեն գոյություն ունեցող բառակրկնություններ:
6. Պոեմի բառապաշարում կիրառված են մի շարք ձայնարկություններ, որոնց դիմելը հեղինակի համար ոճական միջոց է Լոռվա միջավայրը ներկայացնելու և ժողովրդական մտածողությունը վեր հանելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Է. (1976), Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, Հայաստան հրատ.:
2. Աճառյան Հ. (1926), Հայերեն արմատական բառարան, Երևան, Երևանի համալսարանի հրատ.:
3. Եզեկյան Լ. (1990), Գրական աշխարհաբարը և արևելահայ պատմավեպի լեզուն, Երևան, ԵՊՀ հրատ.:
4. Եզեկյան Լ. (1986), Հ. Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի հարցեր, Երևան, ԵՊՀ հրատ.:
5. Թումանյան Հ. (1978), Ընտիր երկեր, Երևան, Սովետ. գրող հրատ.:
6. Խալաթյան Գ., Ջուլֆայան Ռ. (2018), Տեսական և գործնական հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն), Երևան, Արտագերս հրատ.:
7. Կռանյան Ա. (1998), Բառգիրք հայերեն լեզվի, Բեյրութ, Շիրակ հրատ.:
8. Հարությունյան Հ. (1979), Լեզվի և ոճի հարցեր, Երևան, Սովետ. գրող հրատ.:
9. Հայոց լեզվի բարբառային բառարան (2001), Երևան, Գիտություն հրատ.:
10. Մալխասյանց Ս. (1944), Հայերեն բացատրական բարառան, Երևան, Հայկական ՍՍՌ պետական հրատ.:
11. Մելքոնյան Ս. (1969), Թումանյանի պոեզիայի լեզուն և ոճը, Երևան, Միտք հրատ.:

REFERENCES

1. Aghayan E. (1976), Ardi hayereni bacatrakan bar'aran /Explanatory Dictionary of Modern Armenian/, Yerevan, Armenia ed.

2. **Acharyan H. (1926)**, Hayeren armatakan bar'aran /Armenian Etymological Dictionary/, Yerevan, YSU ed.
3. **Yezeqyan L. (1990)**, Grakan ashxarhabary' ev ar&elahay patmavepi lezown /The Literary World and Eastern Armenian Historical Language/, Yerevan, YSU ed.
4. **Yezeqyan L. (1986)**, H. Mat'&osyani ard'aki xosqarvesti mi qani harcer /Several questions about H. Matevosyan's prose in speech art/, Yerevan, YSU ed.
5. **Tumanyan H. (1978)**, Y'ntir erker /The best works/, Yerevan, Soviet. writer ed.
6. **Khalatyan G., Julfayan R. (2018)**, Tesakan ev gorc'nakan hayoc lezow (hnchyownabanowt'yown, bar'agitowt'yown) /Theoretical and Practical Armenian Language (phonology and vocabulary)/, Yerevan, Artagers ed.
7. **Kranyan A. (1998)**, Bar'girq hayeren lezvi /Word book of the Armenian language/, Beirut, Shirak ed.
8. **Harutyunyan H. (1979)**, Lezvi & otwi harcer /Questions of language and style/, Yerevan, Soviet. writer ed.
9. **Hayoc lezvi barbar'ayin bar'aran /A dialect dictionary of the Armenian language/ (2001)**, Yerevan, Science ed.
10. **Malkhasyanc S. (1944)**, Hayeren bacatrakan barar'an /Armenian explanatory dictionary/, Yerevan, Armenian USSR state ed.
11. **Melkonyan S. (1969)**, T'owmanyani poeziayi lezown ev otwy' /The language and style of Tumanyan's poetry/, Yerevan, Mind ed.

Гаяне Халатян, Елена Тумоян

Исследование лексики поэмы Ованнеса Туманяна «Лореци Сакон»

Заключение

Ключевые слова и выражения: диалектные слова, заимствования, усложнения, авторский стиль писателя, повторные слова.

Лексика поэмы Ованнеса Туманяна многослойна. В произведении нередки словообразования, типичные для лоринского диалекта, посредством которых автор представляет среду выполнения действий, особенности характера героя Сако.

Наша цель – рассмотреть разные пласты лексики поэмы «Лореци Сакон».

В статье мы провели исследование разных слоёв лексики поэмы Ованнеса Туманяна «Лореци Сакон»: диалектные слова, разговорные слова, заимствования вошедшие в диалекты, различного рода усложнения, повторные слова, звукоподражательные слова с помощью которых автор создаёт более живописное описание Лорийской среды, делает раскрытие черт характера пастыря Сако.

В результате исследования сделаны следующие выводы:

1. Исследуя лексику поэмы мы выяснили что автор часто использует типичные слова для Лорийской территории.
2. Некоторые из использованных слов являются заимствованиями с других языков, какими являются персидский, арабский и турецкий.
3. Для придачи выразительности природе и для придачи стиля использованные в поэме собственные имена были олицетворены.
4. В работе мы обратили внимание на специфические сложности для Лорийского диалекта с особым семантическим значением, которые нельзя заменить эквивалентными словами литературного языка.
5. В поэме часто встречается повторные слова. Автор использовал уже существующие Лорийские повторные слова.
6. В лексике поэмы задействованы ряд звукоподражательных слов, использование которых для автора было средством выражения стиля, для презентации и раскрытия народного мышления.

Gayane Khalatyan, Yelena Tumoyan

The study of the vocabulary in Hovhannes Tumanyan's poem “Loretsi Sakon”

Conclusion

Key words and expressions: dialect words, borrowings, linguistic complexities, author's style, repeated words.

The lexicon of Hovhannes Tumanyan's poem is multilayered. In the work, there are frequent word formations typical of the Lorin dialect, through which the author portrays

the environment of the actions and the characteristics of the hero Sako. Our goal is to examine different layers of the lexicon in the poem “Loretsi Sakon”.

In the article, we conducted a study of the different layers of vocabulary in Hovhannes Tumanyan's poem “Loretsi Sakon”: dialect words, colloquial expressions, borrowed terms that have entered dialects, various linguistic complexities, repeated words, and onomatopoeic words. These elements help the author create a more vivid depiction of the Lori environment and reveal the character traits of the shepherd, Sako.

The following conclusions have been drawn as a result of the research.

1. Upon studying the poem's vocabulary, we discovered that the author frequently employs typical words from the Lori region.
2. Some words used are borrowed from other languages such as Persian, Arabic, and Turkish.
3. To depict nature and enhance style, the proper nouns used in the poem were personified.
4. Throughout the work, we observed specific complexities in the Lori dialect with particular semantic implications that cannot be substituted by equivalent words in the literary language.
5. The poem exhibits frequent repetition of words. The author utilised existing Lori repeated words.
6. The poem's lexicon includes numerous sound-imitating words. Their use by the author serves as a stylistic device for presenting and revealing folk beliefs and ideas.

***Գայանե Խալաթյան** - Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունները՝ ժամանակակից հայոց լեզու: Հեղինակ է չորս տասնյակ հոդվածների, բուհական գիտամեթոդական հոդվածների: gayane.khalatyan.1958@mail.ru*

Ելենա Թումոյան - Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ երրորդ կուրսի ուսանող: Գիտական հետաքրքրությունը՝ ժամանակակից հայոց լեզու: tumoyanelena-1@aspu.am

Гаяне Халатян – Профессор Государственного университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук, преподаватель кафедры армянского языка и методики его преподавания. Научные интересы: все современные курсы армянского языка. Автор четырех десятков статей, университетских научных методических статей. gayane.khalatyan.1958@mail.ru

Елена Тумоян – Студентка третьего курса АГПУ университета имени Хачатура Абовяна. Научный интерес: современная филология армянского языка. tumoyanelena-1@aspu.am

Gayane Khalatyan - Professor at ASPU named Khachatur Abovyan, a candidate of pedagogical sciences, and a lecturer of the Armenian Language and its Teaching Methodology. Scientific interests: all modern Armenian language courses. She has authored four dozen articles and university scientific methodological articles. gayane.khalatyan.1958@mail.ru

Yelena Tumoyan- Third-year student at ASPU named after Khachatur Abovyan. Scientific interest: the modern Armenian language lexicology. tumoyanelena-1@aspu.am

Խմբագրություն է ուղարկվել 10.01.2024թ.

Հանձնարարվել է գրախոսության 15.01.2024թ.

Հրատարակման է ներկայացվել 05.06.2024թ.